ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հունիսի 2015թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 605-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Գլենդել Հիլզ» փակ բաժնետիրական ընկերության միակ բաժնետեր Էդուարդ Մելիքյանի 21.04.2015թ. թիվ 2 որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրաբերություն ընդունել «Գլենդել Հիլզ» փակ բաժնետիրական ընկերության սեփականությունը հանդիսացող Երևան քաղաքի Արգիշտի փողոցի 11/4 հասցեի պոմպակայանում տեղակայված 5100000 ՀՀ դրամ արժեքով շարժական գույքը՝ համաձայն հ.1 հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննարկվող նախագծով նախատեսվում է որպես Երևան համայնքի սեփականություն ընդունել «Գլենդել Հիլզ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Երևան համայնքին նվիրաբերված Երևան քաղաքի Արգիշտիի 11/4 հասցեում գտնվող պոմպակայանում տեղակայված շարժական գույքը (պոմպ և սարքավորումներ)։

Գույքը հանձնվում է Երևան համայնքին նվիրաբերությամբ՝ Արգիշտիի 11/4 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի ջրամատակարարումն ապահովելու նպատակով։

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (Նվիրատուն) մյուս կողմի (Նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք կամ իրեն, կամ երրորդ անձին ուղղված գույքային իրավունք (պահանջ), կամ ազատում է, կամ պարտավորվում է նրան ազատել իր կամ երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավորությունից:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրաբերություն է ճանաչվում Գույքի նվիրատվությունը հանրօգուտ նպատակներով, որը կարող է արվել նաև համայնքներին։

Նվիրաբերողի կողմից գույքի նվիրաբերությունն իրավաբանական անձանց պայմանավորված է այն որոշակի նշանակությամբ օգտագործելով։

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել կայացնելու Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում՝ նվերն ընդունելու մասին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույք ընդունելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույք ընդունելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված 1
Երևան քաղաքի ավագանու
2015 թվականի հունիսի ---ի
N---Ա որոշման

Ց Ա Ն Կ

«Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի կողմից Երևան համայնքին նվիրաբերող Երևան քաղաքի Արգիշտի հ.11/4 հասցեում գտնվող պոմպակայանի գույքի

Հ/Հ	Գույքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	Պոմպ Grundfos Hydro Multi-S G2 CR 10-8	հատ	1	4 500 000	4 500 000
2	Ճնշումային բաք 500լ BHT500	հատ	1	234 000	234 000
3	Ճնշումային բաք 300լ BHT300	հատ	1	156 000	156 000
4	Կցամասեր	հատ	1	210 000	210 000
Ընդամենը					5100000